

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

*2018 թվականի երրորդ եռամսյակում Մյունխի մարզպետարան*

*մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ*

2018 թվականի երրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3518 թղթակցություն, առաքվել՝ 2134 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 387, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 282, մարդու իրավունքների պաշտպանից՝ 1, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 949, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 906, գաղտնի թղթակցություն՝ 41, քաղաքացիներից՝ 952 դիմում: ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից, մարզպետարան է վերահասցեագրվել 280, նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ նախարարություններից՝ 24, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 1 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի դրանից, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2018թ. երրորդ եռամսյակում կատարվել է 126 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: